Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Շիրակի մարզի <<Շիրակի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի <<Երաժշտություն>> (3.5 ժամ) և <<Կերպարվեստ>> (3.5 ժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթը անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի:

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում(Ձև 1), 1 լուսանկար 3x4 չափի
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)
- անձը հաստատող փաստաթուղթ
- <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը առկայության դեպքում
- ինքնակենսագրություն (Ձև 5)
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հաստատող փաստաթղթեր (առկայության դեպքում)
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:
Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փատաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են 2026թ. հուլիսի 20-ից մինչև հուլիսի 29-ը ներառյալ ամեն օր ժամը 9:00-ից 15:00, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերց:
Մրցույթը տեղի կունենա 2026թ. հուլիսի 30-ին ժամը 13:00-ին ՀՀ Շիրակի մարզի <<Շիրակի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում, հասցեն գ. Շիրակ գլխավոր փ. 1-ին փակուղի 44/10:
Տեղեկությունների համար զանգահարել (098) 11-13-56 հեռախոսահամարով: